

ներու մէջ գլուխնին կը խոթեն կը պահուրտին :

Հոս դրուած պատկերին մէջ աս ընտանի հաւերուն գրեթէ ամէն գլուխաւոր տեսակները կան . բայց մենք աս անգամ միայն առջինին՝ այսինքն սիրամարգին համառօտ ստորագրուած իւր զնենք . ետքը մէկաւորներն ալ զատ զատ կը ստորագրենք :

Սիրամարգ¹ :

(Ժ) Ի որ թռչուններուն մէջ ուժի տեղ գեղեցկութիւն փնտռելու ըլլայինք, տարակոյս չկայ թէ սիրամարգը ամենուն թագաւորը պիտի սեպէինք . վասն զի մէկը չկայ անոնց մէջ որ բնութեան ձիրքերովը այնչափ զարդարուած ըլլայ՝ ինչպէս սիրամարգը : Եւ թռչունին սքանչելի տեսքը, կազմուածքին համեմատութիւնն ու ազնուութիւնը, ծանր ու վսեմ քալուածքը ամենուն աչքը իրեն վրայ դարձնել կուտան . ինքն ալ կարծես թէ կը հպարտանայ իրեն այնպիսի գեղեցկութեանը վրայ, մանաւանդ երբոր տեսնէ թէ ուրիշները աչքերնին տընկած իր վրայ կը նային : Երուին երկու ոտքն ալ մէյմէկ բիտ՝ ունի : Ագը արուէն պզտիկ է, ու աւելի իր պոչովը կը տարբերի անկէ, որ ոչ արուին պոչին չափ երկայն է, և ոչ ալ անոր փայլուն ու ազնիւ գոյները և աչքի ձևով գեղեցիկ բծերն ունի : Առնկին վրայի փետուրները մոխրագոյն սև են, ինչպէս նաև գլխուն վրայ զարդ ընող փետուրէ ցցունքն ալ՝ գրեթէ բոլոր մոխրագոյն է, բաց ի մէկ քանի կանաչագոյն ու ոսկեգոյն բծերէ : Այն վերի կողմը ճերմակ է, իսկ վարի կողմը և կուրծքին փետուրները կանաչ են, ու ծայրերնին միայն ճերմակ է : Երու սիրամարգին վրայ բնութե խիստ աղուոր գոյները կան, քի կանաչ, կապոյտ,

և ոսկեգոյն . և կարծես թէ ուրիշ գեղեցիկ գոյնգոյն թռչունները սիրամարգին փառաւորութենէն աւելցած գոյներովը զարդարուած են :

Սիրամարգին սքանչելի փետուրները, որ իրենց պայծառութեամբ՝ գեղեցիկ ու կենդանի ծաղիկներէն գերազանց են, գոյներնին կը նմանեն, կամ թէ ըսենք՝ ծաղիկներուն պէս ալ կը թռչունն ու ամէն տարի կը թափին : Սիրամարգը կարծես թէ իմանալով իր գլխուն եկածը, ան միջոցին երեսը կը պահէ, կը վախճայ դուրսը երևնալու, գոց ու մութ տեղուանք կը փնտռէ և հոն կը քաջուի ինչուան գարուն, այսինքն ինչուան որ նորէն առջի զարդարանքը գտնէ :

Փորձով գիտենք թէ անկարելի է որ արտաքին ձիրքերուն հետ միշտ մէկտեղ գտնուին նաև ներքին կամ մտաւոր փափաքելի կատարելութիւնները . և աս բանիս մեծ օրինակ է սիրամարգը . վասն զի ձայնը խիստ անախորժ է, և խիստ դժուար կը թռչի : Նանալու համար ծառի վրայ կը դառի կամ տանիքի վրայ կը կծկրտի . հաւնոցներուն մէջ շատ անգամ բռնաւորի պէս տակն ու վրայ կ'ընէ հաւերը . տանիքներու վրայ ելլել կը սիրէ ու կ'աւրէ զանոնք . պարտէզներն ու ծաղկի ածուներն ալ անապատ կը դարձնէ :

Եւ գեղեցիկ թռչունին բուն հայրենիքը հիւսիսային Նոդկաստանն է, և անկէ Աւրոպա բերել տուողը մեծն Եւրոպայի եղաւ կ'ըսեն : Այրենին ընտանեցածէն աւելի գեղեցիկ տեսք ունի . վասն զի ասոր կունակն ու թռչունը վրայ երկնագոյն է, պոչն ալ աւելի փառաւոր ու զարդարուն :

Տեսակ մը սիրամարգ ալ կայ, որ գլխուն ցցունքը աւելի երկայն է խիտ է, և վիզը կանաչ և ոսկեգոյն :

Ուրիշ իրեք տեսակ սիրամարգ ալ կայ որ այնչափ մեծ ու այնչափ գեղեցիկ չեն : Ճերմակ սիրամարգը մեծ տարբերութիւն ունի հասարակէն ու մանաւոր ցեղ մըն է :

1 Լատ. Pavo. Գր. Paon. ՏՃ. Թառս Գոռն :

2 Մանգու :

Հին ատենի Յոյնք սիրամարգը
 Հերային ընծայած էին : Այլաբան-
 օրէն՝ պոչը բացած սիրամարգը հը-
 պարտութեան նշան է : Ատենով սի-
 րամարգին փետուրները հովահար
 շինելու կը գործածուէին , ու Աւրո-
 պացւոց հին բանաստեղծները դափ-
 նիի տեղ աս փետուրներով շինած
 պսակներ կ'առնէին : Կեսներ կեր-
 պաս մը տեսեր է որ առէջքը մետաք-
 սէ ու ոսկի թելով է եղեր , իսկ թե-
 ղանը՝ սիրամարգի փետուրներէ . աս
 կերպով շինուած կ'երեւնայ նաև ան
 հռչակաւոր ծիրանին որ Պօղոս Գ
 պապը Պիպինոս թագաւորին ընծայ
 խրկեր էր : շինու երկիրը սիրամար-
 գի փետուրները պատուոյ նշան են ,
 և միայն մանտարիները՝ այսինքն
 մեծամեծները իշխանութիւն ունին
 իրենց գլխարկին վրայ դնելու : Ատե-
 նով սիրամարգի փետուրը Անգղիա-
 ցոց թագաւորներուն ալ մեծ զար-
 դարանքն էր :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Այլեւանք երկրագործութեան :

է

() Դէ ու իւրայի վրայ :

Հ . () Դը ինչ է .

Պ . () Դը առաձգական հեղանիւթ
 մըն է անգոյն , որ մեր ամէն կողմը
 պատած է . առանց ասոր կենդանի-
 ները շունչ չեն կրնար առնել , և նիւ-
 թերը չեն այրիր : Այլոր աշխարհիս
 բոլորտիքը պատած օդը միւրաբար կ'ը-
 սուի , և մթնոլորտին թանձրութիւնը
 15^{էն} ինչուան 16 փարսախ է :

Հիները կարծէին թէ օդը պարզ
 տարերաց մէկն է . բայց ետքը իմա-
 ցուեցաւ որ երկու տեսակ կազէ բա-

ղադրուած է , այսինքն մէյմը Խիւս-
 ծի կազէ՝ որով շունչ կ'առնենք և
 մարմինները կ'այրին , մէյմըն ալ ան-
 կէրան կազէ , որ մէջը եղած կենդա-
 նի արարածները կը սպաննէ , ու թէ
 որ վառած մարմին մը մէջը խոթես՝
 կը մարէ : Այոնցմէ զատ կայ նաև
 ածխային կազ , որ այրած ածուխէն
 կ'ելլէ . ինչպէս նաև գինիին եռալու
 ատենը պղպշակի ձևով անոր մէջէն
 կ'ելլէ : Արկրէս ելած ամէն գոլորշի-
 ները օդուն մէջ կը կենան , և բոյսերն
 են որ մթնոլորտին օդը կը մաքրեն :

Հ . () Դուն մէջ ինչ փոփոխութի-
 ներ կ'ըլլայ .

Պ . Արևու ջերմութեանն ու լու-
 սոյն ճառագայթները մեզի գալու ա-
 տեն օդուն մէջէն կ'անցնին . անով օ-
 դը ուրիշ նիւթերուն պէս կը տաք-
 նայ , իր քանակութիւնը կը մեծնայ ,
 և մասնաւոր ջերմութիւն մը կ'ունե-
 նայ որ ջերմաչափ գործիքով կը չա-
 փուի :

Այլ ջերմութեան չափը միշտ նոյն
 չէ , հապա ամէն երկիր կը փոփոխի . և
 որչափ հասարակածէն դէպ 'ի բւեռ-
 ները երթաս , այնչափ կը պակսի .
 այլեայլ երկիր տարւոյն ամէն եղա-
 նակներուն կը փոփոխի . նմանապէս
 օրուան և գիշերուան ամէն ժամուն
 ալ նոյն չմնար : () Դուն մէջ կ'ըլլան
 նաև մետէորաները , ինչպէս են ջեր-
 մութեան կամ ցրտութեան փոփո-
 խիլը , չորութիւն ու խոնաւութիւն ,
 ցօղ , մառախուղ , անձրև , կարկուտ ,
 հով , որոտմունք , կայծակ , փայլակ ,
 որոնք բոլորը մէյմէկ մետէորայ կամ
 մթնոլորտի երևոյթներ են :

Հ . () Դին փոփոխութիւնը բոյսե-
 րուն վրայ ինչ ազդեցութիւն ունի .

Պ . Այլոր տարւոյն մէջ օդին ընդ-
 հանուր վիճակը բուսոց վրայ շատ
 ազդեցութիւն ունի . աս օդին վիճա-
 կը ամէն տեղ տարբեր է , անանկ որ
 բոյս մը աս օդին կամ կլիմային մէջ
 աղէկ առաջ կուգայ , իսկ ուրիշ կլի-
 մայի տակ շատ դժուարութեամբ ,
 կամ ամենեւին առաջ չգար :